մար, մեր անհատական շահուն և հասարակաց օգտին համար, պէտք ենք որչափ որ կարելի է սորվիլ մեր լեզուն, ընկերական ո՛ր դասակարգին մէջ ալ դրած ըլլայ զմեզ բախտը, ի՛նչ ալ ըլլայ մեր պաշտօնը ընկերութեան մէջ և ի՛նչ ալ ըլլայ մեր արհեստին վերաբերեալ ուսմունքներուն բնութիւնը, ինչպէս ո՛ր մասին մէջ ալ ծնած ըլլանք կամ սահմանուած ապրելու, պէտք ենք զայն ուսումնասիրել, որովհետեւ մի և նոյն բաներն են՝ հայրենիք և լեզու, մտածութիւն և խօսք, խօսք և կեանք։

Տէ ԱՄԻՉԻՍ

Թրգմ. Հ. Ա. ՑՈՎՍԷՓԵԱՆ

# ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ

Ա.

Փաւստոս էջ 13.

«Եթէ ոք գտցի որ և արասցէ ունել զուխտ հաստատեալ հաւատոց»։ Հ. Նահապետեան կ՚ուղղէ ասասցէ. ըստ մեզ որ կարասցէ։

Բ.

Էջ 20. տող 28. «Ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց և ոչ նայել»։ Հ. Նահապետեան կ՚ուղղէ «Եւ ոչ տիրել»։ ըստ մեզ Եւ ոչ (խ)նայել։

Գ.

Էջ 31. տող. 14. «Ցերեսսն յանդիմանութեամբ հարկանելով, խրատելով կշտամբելով արկանէր, զսպանումն տանջանաց յաւիտենական բարկութեան»։ Հ. Նահապետեան առաջին հարկանելովը ջնջելով կը կարդայ. «Ցերեսսն ... կշտամբելով հարկանէր, զսպանումն տանջանաց»։ ըստ մեզ պէտք է մնայ առաջին հարկանելովը և պէտք է կարդալ. «Կշտամբելով առաջի արկանէր զսպանումն տանջանաց»։

Դ.

«Անընտիրք եղեալք (Պապ և Աթանագինէս) ի հպարտութեանն խոտեցան»։ Հ. Նահապետեան կ՚ուղղէ. ի քահանայութեան. ըստ մեզ ի հրպարտութենէ (= ի հայրապետութենէ) խոտեցան։ (Բ տպ.)

Ե.

Էջ 49. տող 8. «Գտանէին ... զկճղացեալ զոսկերս նոցա»։ Հ. Նահապետեան կը սրբագրէ զկճացեալ. ըստ մեզ զկոճղացեալ (կոճղ դարձած)։

Զ.

Էջ 56. տող 17. «Առին զկապուտ, զաւար բանակին և զկանայս թագաւորին և զբամբիշն և զբանակն ընդ նոսին»։ Հ. Նահապետեան աւելորդ և ջնջելի կը համարի զբանակն. ըստ մեզ ուղղելի է զբանակն, բանակին աւարէն զատ, Պարսիկները առին բուն բանակն ինքնին, (անշուշտ վրաններ)։ Հ. Նահապետեան «Առին ... զաւար բանակին» բացատրութեան մէջ ամբողջ բանակին գրաւումը նշմարած է. այս տեսակէտով, ի հարկէ, զբանակն աւելորդ կրկնութիւն մը պիտի ըլլար։

Հ. Կ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ

## Ա. — «ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԵԱՄԲՆ»

առ Հ. Գ. Ն.

Փարպեցւոյ 35դ ուղղագրութեամբ (Բազմ. Մայիս էջ 208) «Աստուծոյ զօրութեամբն» բառերը աքսորի կը դատապարտէք վասն զի «եկամուտ» են։ Ներեցէք հաստատել որ անոնք եկամուտ չեն, այլ խանգարուած։ Փարպեցի կ՚ըսէ.

«Եւ թագաւորին վաղարշու հարցեալ զՄիհրան – Ճապուհ զզօրծոյն Հայոց՝ թէ զի՞նչ կարացեր գործել գործ յաշխարհին Հայոց, և Վահանայ զի՞նչ միտք են և ոյժ, և ո՞րպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Արեացս, Աստուծոյ զօրութեամբն»։

Ուղղելի. «Նուաստ ուժոյ զօրութեամբ»։

Լսած էր Վաղարշ, եթէ Վահան «տասն արամբք ի վերայ երից հազարաց այրընտիր արանց յարձակեալ ... խորտակեաց զամենեցունց զսիրտս, և պատառեալ զայնչափ զօրաց բազմութիւն, մեծամեծս գործեաց վնասս», և այլն։

Վահանայ զօրքը շատ նուազ էին. հետեւաբար ամենապարզ է մեր առաջարկած ուղղութեան պատճառը։

## Բ. — «ՈՐ ԵՒ ԱՌ ՈՑԺ ԿԱՑԱԶԻ ԱՐԱՆՑ»

Ներուի այս ընթերցման հինգերորդ ուղղագրութիւն մ՚ալ առաջարկել. կարելի չէ՞ կարդալ.

«Որ և անոյժ ԿԱ (= վաթսուն և մի) անձի արանց»։

Անտարակոյս, աւելի՝ «նշան մեծ» է, եթէ 61 հոգի, առանց ծիու, կարենան անցնիլ գետէն «անհոգութեամբ» քան թէ՝ «կանացի» մարդիկ, որոնք սակայն ձի ունին։

Կարծեմ Փարպեցին աշխարհաբար այսպէս պիտի ըսէր.

«... Եւ յայտնապէս ասիկայ մեծ հրաշք մ՚էր. որ(ովհետ)եւ 61 հոգի, որ ձի չունէին, անցան դիւրութեամբ ու հանոյքով, – ինչպէս նաեւ բոլոր ձիաւորները»։

ՄՆՆԱՍԷՐ

digitised by A.R.A.R.@